Մեծ քանակությամբ գրքեր են ստացվել նաև Բեյրութի Տոնիկյան հրատարակչությունից, Նյու-Յորքի համասերբատահայ վերաշինաց միությունից և հայկական բարեգործական ընդհանուր միությունից, Քեմբրիջի (ԱՄՆ) հայագիտական ուսումնասիրությունների ազգային ասոցիացիայից։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության որոշման համաձայն մեր ակադեմիային նվիրաբերված անձնական գրադարանները ֆունդամենտալ գրադարանում պահվում են նվիրատուի անունով, որպես առանձին ֆոնդ։

Ֆրեզնոյից Լուիզ Նալբանդյանը 1965—1968 թթ. ուղարկել է 58 օրինակ հրատարակություններ բյուզանդագիտության և պատմության վերաբերյալ։ Կահիրեից 1966 թ. ստացվեց Արշակ Ալպոյաճյանի անձնական գրադարանը, թվով 8029 օրինակ հայերեն և եվրոպական լեզուներով հայագիտական գրքեր և պարբերականներ։ Հեղինակը իր մահից առաջ այդ գրադարանը կտակել էր ՀՍՍՀ ԳԱ ֆունդամենտալ գրադարանին։ Նյու-Յորքից Մանուկ Թերզյանը 1967 թ. ուղարկել է 343 օրինակ 1912—1965 թթ. հրատարակություններ արվեստի ու գրականագիտության վերաբերյալ։ Սոֆիայից Պետրոս Պոստանճյանը 1967 թ. ուղարկել է հայագիտությանը վերաբերող 2172 հայերեն գրքեր և պարբերականներ։ Լոս-Անժելոսից Արսեն Երիցյանը 1968 թ. ուղարկել է անտիկ գրականությանը վերաբերող 5147 գիրք՝ օտար լեզուներով։ Բեյրութից Արամ Ալթունյանը 1969 թ. ուղարկել է օտար լեզուներով 206 բժշկական գրքեր։

Նվիրատվությամբ միմիայն 1969 թ. արտասահմանից ստացվել է ընդամենը 5426 գիրք և հանդես։

Բացի վերոհիշյալ աղբյուրներից ակադեմիայի գրադարանները, սկսած 1945 թ., արտասահմանյան գրքեր, հանդեսներ և թերթեր են ձեռք բերում նաև դեսպանների միջոցով։ 1969 թ. այդ ճանապարհով ստացվել է 8405 գրադարանային միավոր արտասահմանյան հետևյալ հրատարակչություններից. «Ակադեմիկ պրես» (Լոնդոն), «Պերգամոն պրես» (Նյու-Յորք և Լոնդոն), «Գոթենվիլար» (Փարիզ), «Էլզեվիր» (Ամստերդամ), «Սպրինգեր Ֆելլաս» (Բեռլին), «Մութոն» (Փարիզ)։

Միջգրադարանային կապերի ամրապնդման միջոցներից մեկն էլ հանդիսանում է արտասահմանյան հյուրերի ընդունումը, որի շնորհիվ նրանք ծանոթանում են ֆունդամենտալ գրադարանի գրքային հարստությանն ու ակադեմիայի հրատարակություններին և պայմանավորվում գրքափոխանակության մասին։ Վերջին տարիներս ֆունդամենտալ գրադարան հաճախել են արտասահմանյան շատ գիտնականներ Բուլգարիայի Ժողովրդական Հանրապետության գիտությունների ակադեմիայից, Կանադայի գիտական գրադարանների մի շարք ղեկավարներ, ԳՖՀ գիտնականներ (այդ թվում՝ նաև հայագետներ), Բելգիայի ժուռնալիստներ, արտասահմանի հայկական դպրոցների ուսուցիչներ, մի շարք հայտնի հայագետներ (Հունգարացի էդմունդ Շյուցը, ֆրանսիացի Ֆրեդերիկ Ֆեյդին, իտալացի Ջանկարլո Բոլոնեզին, Կալիֆորնիայի համալսարանի պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը, Լոս-Անժելոսի համալսարանի պրոֆ. Ավետիս Սանճյանը, Քեմբրիջի հայագիտական ամերիկյան կենտրոնի ղեկավար Մանուկ Ենգը և այլն։

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՍԱՆԱՀՆԻ ԳՐԱՏԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Հայոց թվականության ՆԻԱ (972) տարում «Սիմէաւն» գրիչը Սանահնի վանքի նորակերտ կամարների տակ ընդօրինակում է մեսրոպատառ առաջին մատյանը՝ Բարսեղ Կեսարացու «Կանոնգիրքը»[1]։ Այդ մատյանի ընդօրինակությամբ էլ սկսվում է վանքի, որպես գրչության կենտրոնի գործունեությունը, որը ընդհատումներով ձգվում է մինչև XVIII դարի վերջերը։ Որպես վարդապետանոց և գրչության արվեստի կենտրոն, Սանահնի վանքը ունեցել է նաև իր գրատունը, ձեռագիր մատյանների իր հարուստ հավաքածուն, որը, ինչպես մեր բոլոր հավաքածուները, զերծ չի եղել ո՛չ թշնամական հորդաների ավարից ու ավերածությունից, և ո՛չ էլ յուրայինների անհոգությունից։ Թե ինչ ձեռագրեր է բովանդակել հավաքածուն և քանակական ինչ փոփոխություններ է կրել իր ավելի քան իննհարյուրամյա գոյության ընթացքում, դժվար է ասել, քանի որ չեն եղել կամ չեն պահպանվել

[1] Ս. Ջալալյան, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Տփղիս, 1842, էջ 42։

համապատասխան ցանկեր ու ցուցակներ։ 1904 թ. այնտեղ մնացել էր ընդամենը 27 մատյան։

Երբ 1904 թ. Սանահնի վանքի վանահայր Գարեգին եպս. Սաթունյանցը նշանակվում է Վրաստանի և Իմերեթիայի թեմի առաջնորդ, վանքի գրատանը գտնվող այդ 27 ձեռագրերը հատուկ ցուցակով առաքում է Էջմիածին։ Այդ առթիվ «Լուման» գրում է. «Ս. Էջմիածնից մեզ հաղորդում են, որ Սանահնի վանքում գտնված քսաներեքն հատ բավական կարևոր ձեռագիրներ նույն վանքի նախկին վանահայր... Գարեգին եպիսկոպոսի կարգադրությամբ ուղարկվել են վեհափառ կաթողիկոսին Ս. Էջմիածնի մատենադարանում պահելու համար»[2]։ 27 ձեռագրերի Էջմիածին մուտք գործելու հանգամանքը հաստատում է նաև «Արարատ» ամսագիրը, ուր կարդում ենք. «Վրաստանի և Իմերեթի առաջնորդ Գեր. Տ. Գարեգին եպիսկոպոս Սաթունյանից ստացանք հետևյալ ձեռագիրները...»[3]։ Ապա հաջորդում է առաքված 27 ձեռագրերի ցուցակը, որը ամենայն հավանականությամբ կազմել է Գարեգին եպս. Սաթունյանցը։ Ահա այն. «Ցուցակ ձեռագիր մատենից Սանահնոյ վանից». ցուցակում 1—27 թվահամարների ներքո համառոտակի արձանագրված են 1904 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ Սանահնի վանքի գրատանը առկա բոլոր 27 ձեռագրերը՝ նշելով յուրաքանչյուրի խորագիրը, գրանյութը, գրչության կամ վերանորոգության թվականը։

Այդ 27 ձեռագրերից 25-ը (№№ 2, 4—27) ժամանակին (1904) մտել են «Գևորգյան» կոչվող հավաքածուի մեջ և այսօր գտնվում են Մաշտոցի անվան մատենադարանում (տե՛ս տախտակ Ա)։ Այդ առթիվ «Գևորգյան» հավաքածուի գույքամատյանում նշում է կատարված. «№№ 1122—1146 Սանահնի վանքի ձեռագիրներն են, որի վանահայրը 1904 թվի սեպտեմբերին բերավ Մայր Աթոռս Մատենադարանը»։ Մյուս 2 ձեռագրերը (№№ 1, 3), ինչ-ինչ հանգամանքներում, նախքան գրանցվելը կորել են և դարձել մասնավոր անձանց սեփականություն։ Այդ երկու ձեռագրերից առաջինը (№ 1) Մատենադարանը ձեռք է բերել 1960 թ. Թիֆլիսում՝ Հովհաննես Մելիք-Նուբարովից, իսկ երկրորդը (№ 3)՝ 1949 թ. Ախալքալաքում՝ Բորիս Դեմիրճօղլյանից։

Ստորև տալիս ենք այդ 27 ձեռագրերի հին և նոր թվահամարների համեմատական տախտակը.

Ա. համեմատական տախտակ Սանահնի գրատան ձեռագրերի հին և նոր թվահամարների

(Ըստ «Արարատ»-ի 1905 թ. ցուցակի)

«Արարատ» 1905	Մատենադարան «Գևորգյան»	Մատենադարան թիվ	«Արարատ» 1905	Մատենադարան «Գևորգյան»	Մատենադարան թիվ
1	—	9999	15	1135	3050
2	1129	3400	16	1143	3051
3	—	9319	17	1125	2839
4	1131	3701	18	1139	3566
5	1127	3700	19	1142	3354
6	1124	2838	20	1128	3565
7	1122	3048	21	1138	3612
8	1126	3049	22	1141	3353
9	1123	2837	23	1140	3352
10	1132	2745	24	1136	3611
11	1133	4435	25	1134	2660
12	1137	2840	26	1130	2659
13	1144	3401	27	1146	4548
14	1145	3402			

* * *

Բացի վերոհիշյալ 27 ձեռագրերից, Մաշտոցի անվան մատենադարանում առկա են ևս 7 ձեռագրեր (№№ 2375, 2532, 2802, 3031, 3201, 4331 և 4465) որոնք պատկանել են Սանահնի նախկին գրատանը և որոնք այնտեղից դուրս եկած լինելով շատ ավելի վաղ, չեն մտել վերը նշված ցուցակի մեջ։ Այդ 7 ձեռագրերից մեկը (№ 2375) Մատենադարան է մուտք գործել 1873 թ. Աղեքսանդր Երիցյանի միջոցով, մեկը (№ 2532)՝ 1888 թ. Աստրախանի հայոց երկսեռ ուսումնարանի հավաքածուի կազմում, չորսը (№№ 2802, 3031, 3201, 4331)՝ 1890—1900 թթ. ընթացքում, իսկ վերջինը (№ 4465)՝ 1910—1915 թթ.։

Այսպիսով, Սանահնի նախկին գրատան ձեռագրերից այսօր Մաշտոցի անվան մատենադարանում են գտնվում 34-ը (27+7)։ Այդ 34 ձեռագրերից 8-ը, ըստ ձեռագրերի վրա եղած նշումների, հանված են Աջառաց այրից, այդ թվում վեցը (№№ 2532, 2660, 2802, 3031, 3050, 3201)՝ 1797 թ. Հովսեփ Արղությանի և Առաքել վարդապետի միջոցով, մեկը (№ 3352)՝ 1829 թ.՝ Հովհաննես քահանայի ձեռքով և մեկը (№ 2375)՝ 1873 թ. Աղեքսանդր Երիցյանի ջանքերով։ Աջառաց այրից հանված այս 8 ձեռագրերից մեկը (№ 2532) հետագայում մտել է Աստրախանի հայոց երկսեռ ուսումնարանի հավաքածուի մեջ (№ 57), իսկ մեկ ուրիշը (№ 3050)՝ ընկել է ոմն Ավետիս Եղիազարյանի ձեռքը, որն այն կրկին նվիրաբերել է Սանահնի վանքին։ Ձեռա-

---

2 «Լուման», 1904, № 5, էջ 218։

3 «Արարատ», 1905, № 4, էջ 391։

գրերից մի քանիսի վրա եղած մակագրություններն ու նշումները ցույց են տալիս.

— № 4465 ձեռագիրը Հարություն արքեպս. Սանահնեցին տանելով Դանձակի Թարգմանչաց վանքը, նվիրել է նույն վանքի միաբան Գրիգոր վրդ. Տեր-Հովհաննիսյան Դանձակեցուն։

— № 3402 ձեռագիրը պատկանել է Բագրատ Երվանդյանին, որն այն 1871 թ. նվիրաբերել է Սանահնի վանքին։

— № 3400 ձեռագիրը 1759 թ. եղել է Ամստերդամի Ս. Հոգի եկեղեցում։ Այն 1793 թ. ստացել է Հովսեփ Արղությանը և նվիրաբերել Սանահնի վանքին։

— № 4331 ձեռագիրը պատկանել է Վարդան Օձնեցուն և մինչև անցյալ դարի 70-ական թթ. եղել է Սանահնում։

— № 9319 ձեռագիրը 1857—1878 թթ. եղել է ախալքալաքցի Ստեփաննոս ավագ քհ. Դեմիրճօղլյանի մոտ։

Ստորև տալիս ենք հիշատակված 34 ձեռագրերի հին և նոր թվահամարների հակադարձ համեմատական Բ տախտակը.

Բ. համեմատական տախտակ Սանահնի գրատան ձեռագրերի նոր և հին թվահամարների

Մատենադարան		[illegible] 1965	Մատենադարան		[illegible] 1965
[illegible]	«Գևորգյան»		[illegible]	«Գևորգյան»	
2375	—	—	3353	1141	22
2532	346	—	3354	1142	19
2659	1130	26	3400	1129	2
2660	1134	25	3401	1144	13
2745	1132	10	3402	1145	14
2802	738	—	3565	1128	20
2837	1123	9	3566	1139	18
2838	1124	6	3611	1136	24
2839	1125	17	3612	1138	21
2840	1137	12	3700	1127	5
3031	745	—	3701	1131	4
3048	1122	7	4331	1255	—
3049	1126	8	4435	1133	11
3050	1135	15	4465	—	—
3051	1143	16	4548	1146	27
3201	394	—	9319	—	3
3352	1140	23	9999	—	1

Ո. ԽԳԱՆՅԱՆ

ՆԵՈԼԻԹԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Նոյեմբերյանի շրջանում 1965—1968 թթ. հայտնաբերվել են նեոլիթյան մի շարք նյութեր, որոնք ոչ միայն հաստատում են նրա տերիտորիայում գոյություն ունեցող վաղ երկրագործական-անասնապահական տնտեսության սաղմնավորման փաստը, այլև օգնում են լրացնելու Հայաստանի նեոլիթյան շրջանի մշակույթի ընդհանուր պատկերը, մի բան, որ դեռևս բավարար ուսումնասիրության և հստակ բնութագրման չի ենթարկվել՝ ժամանակաշրջանի պեղածո մնացորդների ու արտադրության գործիքների սակավության պատճառով։

1968 թ. օգոստոսի վերջին Կողբի գյուղացիներ Նայրի և Աշոտ Արովյանները Մշկավանքի մոտ գտան սեպաձև և կացնաձև քարե գործիքներ, որոնք իրենց ինքնատիպ ձևերով առաջինն էին Հայաստանում։ Լրացուցիչ ստուգումների միջոցով մեզ հաջողվեց հայտնաբերել մի քանի գործիքներ ևս, այդ թվում մուրճիկներ, ուրագաձևերի գործիքներ, բերիչներ, մշակված սրաձևան թալաշներ, որոնք բացվել էին հեղեղատների հետևանքով։ Հավաքածուի 25 իրից ոչ բոլորն են ավարտուն գործիքներ։ Բոլոր գործիքները պատրաստված են կրաքարից և բաժանվում են հետևյալ տիպերի՝ մուրճեր, կացիններ, բերիչներ, սեպաձև գործիքներ, ուրագներ և սկավառակաձև բերիչներ։ Սրանց մեջ առանձնապես ուշագրավ են երկու մուրճերը, որոնցից փոքրը (տախ. I, նկ. 2) պատրաստված է սպիտակ կրաքարից, ունի 16 սմ երկարություն, կլոր բռնակ՝ վրան տաշվածք ցուցամատի համար, իսկ մեծը (տախ. II, նկ. 1) պատրաստված է կարմրավուն կրաքարից։ Նրա երկարությունը՝ 21, միջին հաստությունը 3 սմ է։ Գործիքի բռնակը, որի վրա մատնատեղեր են արված, ունի 10 սմ երկարություն և 4 սմ լայնություն։ Հավաքածուի մեջ առավել հետաքրքրություն է ներկայացնում կացնաձև գործիքը (տախ. I, նկ. 1), որը բռնող մասում ունի երկկողմանի սրվածք։ Նրա երկարությունը մոտ 15, իսկ սայրի լայնությունը 8 սմ է։ Գործիքը, որը հավանաբար օգտագործվել է փայտե բռնակի միջոցով, բարակ կողմից հարմարեցված է փայտե կոթի ճեղքվածքը նստեցնելու և ամրացնելու համար։ Կացնաձև նեոլիթյան գործիքներ հանդիպում են Հասունայի, Ջարմոյի[1],

[1] Гордон Чайлд. Древнейший Восток в свете новых раскопок. М., 1956, էջ 62—64, նկ. 8։